ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

13. 12. 2022



Այսօրվա նիստում ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց

վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնել 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 10.75%

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող **լոմբարդային ռեպոյի** տոկոսադրույքը՝ **12.25 %**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից **ներգրավվող միջոցների** տոկոսադրույքը՝ **9.25 %**

2022թ. նոյեմբերին 12-ամսյա գնաճը նվազել է և կազմել 8.8%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս նվազել է՝ կազմելով 9.9%

Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկի վիճակագրություն

Համաշխարհային տնտեսությունից ՀՀ տնտեսության վրա ակնկալվում է գնաճային ազդեցությունների թուլացում

Համաշխարհային տնտեսությունում տնտեսական ակտիվության դանդաղման միտումները շարունակվում են:
ՀՀ հիմնական գործընկեր երկրներում ընդլայնված պահանջարկից և բարձր գնաճային սպասումներից ածանցվող գնաճային միջավայրը դեռևս պահպանվում է:

Զարգացած երկրների կենտրոնական բանկերը առաջիկայում ևս կշարունակեն խստացնել դրամավարկային պայմանները:

Գնաճը գործընկեր երկրներում, տ/տ աճ



Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքի շարժընթացը զարգացած տնտեսություններում, %



Աղբյուրը՝ BIS, Երկրների կենտրոնական բանկեր

Համաշխարհային տնտեսությունից ՀՀ տնտեսության վրա ակնկալվում է գնաճային ազդեցությունների թուլացում

Գործընկեր երկրներում դրամավարկային պայմանների հետևողական խստացումը կնպաստի համաշխարհային պահանջարկի թուլացմանը և միջազգային ապրանքահումքային շուկաներում գների որոշակի ճշգրտմանը



Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի կանխատեսումներ

Պարենային ապրանքների միջազգային գներ, (2019/12 = 100)



Աղբյուրը՝ www.fao.org

2022թ-ի չորրորդ եռամսյակում ՀՀ տնտեսությունում բարձր ակտիվության միտումները պահպանվում են

Տնտեսական աճին շարունակում է էականորեն նպաստել ծառայությունների ոլորտում ձևավորված արտաքին բարձր պահանջարկը: Միևնույն ժամանակ, դիտվում է արտահանման և ՀՆԱ ներուժի ավելացում ծառայությունների և արդյունաբերության ճյուղերում:

Առաջարկի բաղադրիչներ տ/տ աճ (2022 Q3)



Առաջարկի բաղադրիչներ տ/տ աճ (2022)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրության կոմիտե, ՀՀ Կենտրոնական բանկի կանխատեսումներ

Այնուամենայնիվ, պահպանվող բարձր պահանջարկի և բարձր գնաճային սպասումների ազդեցությունը դեռևս շարունակում է էական նշանակություն ունենալ գնաճի վարքագծում

Իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության, դրամի արժևորման, ինչպես նաև արտաքին հատվածից փոխանցվող ազդեցությունների արդյունքում ներմուծվող պարենային ապրանքների գների աճը որոշակիորեն դանդաղում է: Վերջինս նպաստում է գնաճային միջավայրի մեղմմանը:

Ներմուծված պարենային և ոչ պարենային ապրանքների գնաճը (տ/տ, %)



Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրության կոմիտե, ՀՀ ԿԲ

Բարձր գնաճային սպասումների և անորոշության կշիռը (ԿԲ հարցումներ)



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ

ԿԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

... նպատակահարմար է գտնում բարձրացնել քաղաքականության տոկոսադրույքը

... հետևողական է լինելու համարժեք գործողություններով ապահովելու գնաճի կայունացում և չեզոքացնելու գնաճային սպասումների ապախարսխման ցանկացած ռիսկ:

Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարում 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի և միջնաժամկետ հորիզոնում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

2022թ. վերջին 12-ամսյա գնաճը կկազմի 9.5%



Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի կանխատեսումներ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տոկոսադրույքի մակարդակի որոշման հիմքում ընկած մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ մինչև 2022թ. դեկտեմբերի 27-ը հրապարակվելիք Գնաճի հաշվետվությունում (Դրամավարկային քաղաքականության 2022 թ. չորրորդ եռամսյակի ծրագրում):